

Գանատայի Հայ Դատի յանձնախումբի հանդիպումը արտգործնախարար Մելանի Ժոլիի հետ



Դեկտեմբեր 7-ին, Գանատայի Հայ Դատի յանձնախումբի ներկայացուցիչները Մոնթրեալի մէջ ներկայ գտնուեցան Գանատայի արտաքին գործոց նախարար Մելանի Ժոլիի տարեկան ընդունելութեան, ուր առիթը ունեցան նախարարին հետ քննարկելու Գանատահայ համայնքը յուզող շարք մը հարցեր, միաժամանակ արժարժեցին Արցախի ու արցախահայութեան այժմու կացութիւնը եւ Երեւանի դանատական դեսպանատան հիմնադրումէն ետք Գանատա-Հայաստան երկկողմանի յարաբերութիւններու ընթացքը:

Ի Տէր հանգաւ Սուրէն Արք. Գաթարոյեան

Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Միաբանութիւնը սրտի դառն կակիծով կը գումեն Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Միաբանութեան երիցագոյն անդամներէն՝

Տ. ՍՈՒՐԷՆ ԱՐՔ. ԳԱԹԱՐՈՅԵԱՆ
(1939-2023)

վախճանումը, որ պատահեցաւ Կիրակի, 17 Դեկտեմբեր 2023-ի առաւօտեան, Մոնթրէալի (Գանատա) մէջ:

ԴԻԻԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ

Սուրէն Արք. Գաթարոյեանի կենսագրութեան մանրամասնութիւնները կարդալ մեր այս թիւի էջ 3-ին մէջ:



Առաջնորդ Սրբազան Հայրը հիւրընկալեց ՀՅԴ Գանատայի Կեդրոնական Կոմիտէն



Հինգշաբթի, 14 Դեկտեմբեր 2023-ին, Գանատայի Հայոց Թեմի բարեխնամ Առաջնորդ՝ Գերաշնորհ Տ. Բարդէն Արքեպիսկոպոս Չարեան, Ազգային Առաջնորդարանէն ներս հիւրընկալեց Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Կեդրոնական Կոմիտէի նորընտիր կազմի անդամները: Հանդիպման ներկայ էին նաեւ ՀՅԴ Բիւրոյի անդամ Պրն. Բաֆֆի Տոնապետեան եւ Ազգային Վարչութեան անդամները:

Առաջնորդ Սրբազան Հայրը բարի գալուստի իր խօսքէն ետք, շնորհաւորեց նորընտիր Կեդրոնական Կոմիտէի անդամները եւ յաջողութիւն մաղթեց յառաջիկայ իրենց բոլոր աշխատանքներուն:

Հանդիպման ընթացքին անդրադարձ կատարուեցաւ հայութիւնը յուզող խնդիրներուն, ինչպէս նաեւ Գանատայի հաստատութիւններուն եւ կառոյցներուն վերակենսաւորման եւ աշխատանքներու ձեւերու վերանայման:

Ցաւակցական

Հ.Յ.Դ. Գանատայի Կեդրոնական Կոմիտէն խորին ցաւակցութիւն կը յայտնէ Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդ Բարդէն Արք. Չարեանին՝ Սուրէն Արք. Գաթարոյեանի վախճանման տխուր առիթով:

1966 թուականին, Նորէն Ա. Կաթողիկոսի կարգադրութեամբ, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան միաբաններէն Սուրէն վրդ. Գաթարոյեան հոգեւոր հովիւ նշանակուած էր Գանատայի մէջ: Վախճանեալ Սրբազանը երկար տարիներ եղած է նաեւ Բերիոյ Թեմի բարեջան Առաջնորդ: Տասնամեակներու վրայ երկարող հոգեւորականի իր վաստակով, Սուրէն Սրբազան իր անջնջելի աւանդը ունի Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան պատմութեան տոմարներուն մէջ:

Կեդրոնական Կոմիտէն իր կազմի եւ շրջանի բոլոր ընկերներուն անունով խորազգաց ցաւակցութիւն կը յայտնէ նաեւ Գաթարոյեան ընտանիքին, ցանկալով մխիթարութիւն՝ վշտի այս օրերուն:

Խաղաղութիւն իր հոգւոյն:

«Հորիզոն» շաբաթաթերթի խմբագրութեան եւ անձնակազմին անունով կը շնորհաւորենք մեր ընթերցողներուն Նոր Տարին եւ Ս. Ծնունդը եւ կ'ուզենք տեղեկացնել, թէ «Հորիզոն»-ի յառաջիկայ թիւը լոյս պիտի տեսնէ Զորեմշապթի, 10 Յունուար 2024-ին: Քաջատողջութեամբ եւ խնդութեամբ լի տարի մը կը մաղթենք ձեր բոլորին:

HONDA GABRIEL

THE ALL-NEW 2023 HONDA CR-V TOURING HYBRID

KEVORK ASADOURIAN
TRO BACHEKJIAN

7000, boul. Henri-Bourassa Est
Montréal-Nord, (Québec) H1G 6C4
☎ : 514 327-7777



Al-Nejmah

MIDDLE EASTERN SUPERMARKET

NOW OPEN
NOW OPEN



Սեփականատեր
Յարութ Միֆան

Ընտանեկան բացառիկ գործառնություն
ուր կը գտնէք ձեր բոլոր կարիքները
ուտելիքներու վերաբերեալ

IN HOUSE

COFFEE ROASTING & GRINDING
ROASTING FRESH NUTS
SESAME GRINDING TO MAKE FRESH TAHINA
TANOOR BREAD & IRAQI SAMOON

Մուրճ աղալ եւ խարկել
Հնտեղէն աղալ օրական դրութեամբ
Շուշմայ աղալ եւ թահինի պատրաստել
Թոնիքի հաց եւ իրաքեան սոմոն

Supermarket | Restaurant | Bakery | Halal Butcher
Վաճառատուն, ճաշարան, փուռ, մսավաճառ

PHONE: 289.232.1200
3085 Hurontario St, Unit 1-6, Mississauga



Ի Տեր հանգաւ Տեր Սուրէն Արք. Գաթարոյեան

17 Դեկտեմբերին Մոնթրէալի մէջ վախճանեցաւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան հոգեւորականներէն Տեր Սուրէն Արք. Գաթարոյեան, որ 61 տարի ծառայած է Հայց. Առաքելական Ս. Եկեղեցոյ: Ստորեւ կը ներկայացնենք Տ. Սուրէն Արք. Գաթարոյեանի կենսագրականը:

Ծնած է 21 Յունիս 1939-ին, Հալէպ (Սուրիա): Աւագանի անունն է Աբրահամ: Նախնական կրթութիւնը ստացած է Հալէպի Ազգ. Ուսումնասիրաց եւ Հայկազեան Վարժարաններուն մէջ: Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեւանք ընդունուած է 8 Հոկտեմբեր 1954-ին:

Աւարտելով դպրեւանքի ժառանգաւորաց բաժինը, Սարկաւազ ձեռնադրուած է 22 Յունիս 1959-ին, ձեռնադրուած Տեր Սուրէն Արք. Գաթարոյեանի ֆոնտանոր Տաճատ Արք. Ուրֆայեանի:

Կուսակրօն Եկեղեցական ձեռնադրուած եւ օծուած է 24 Յունիս 1962-ին, ձեռնադրուած Տեր Սուրէն Արք. Գաթարոյեանի, եւ վերակոչուած՝ Տ. Սուրէն Արք. Գաթարոյեան:

Վարդապետական Գաւազան ստացած է 3 Նոյեմբեր 1963-ին, ձեռնադրուած Լիբանանի Առաջնորդ Տաճատ Արք. Ուրֆայեանի, աւարտաճառ ներկայացնելով «Հայց. Եկեղեցոյ Եօթը Խորհուրդներու Պատմական ու կանոնական դարգացումը՝ ըստ Հայց. Եկեղեցոյ կանոնադրութեան»:

23 Դեկտեմբեր 1965-ին, որպէս հոգեւոր հովիւ, գործուղուած է Մոնթրէալ, Գանատա, ուր մնացած է 8 տարի:

Իր հովուութեան շրջանին կարեւորագոյն աշխատանքներէն մին եղած է Մոնթրէալի Ս. Յակոբ Հայց. Եկեղեցոյ եւ Հայ Կեդրոնի շինարարական ծրագրին իրագործումը:

15 Յունիս 1977-ին Բերիոյ Թեմի Ազգ. Վարչութեան Խառն ժողովին կողմէ (Կրօնական եւ Քաղաքական) ընտրուած է Բերիոյ Թեմի Առաջնորդական Տեղապահ: Հալէպ ժամանած է 10 Սեպտեմբեր 1977-ին, եւ 15 Հոկտեմբեր 1977-ին Թեմի Ազգային Գաւառական ժողովին կողմէ ընտրուած է Բերիոյ Թեմի Առաջնորդ:

30 Հոկտեմբեր 1977-ին Եպիսկոպոս ձեռնադրուած եւ օծուած է, ձեռնադրուած Գաթարոյեանի Բ. Աթոռակից Կաթողիկոսին Մեծի Տանն Կիլիկիոյ:

Անոր Առաջնորդութեան շրջանին Բերիոյ Թեմը արձանագրուած է շինարարական վիթխարի իրագործումներ, որոնցմէ այստեղ կ'արձանագրենք միայն գլխաւորները:

- Երկուտասնեակ շէնքեր, որոնց մէջ քանակութիւն հաստատած են կրթական մշակներ, Քահանայ Հայրեր, նորաստեղծներ, եւ զմեքերէն տեղահանուած հարիւրաւոր ընտանիքներ:

- Սրբոց Քառասնից Մանկանց Մայր Եկեղեցոյ շրջափակին մէջ գտնուող հնազարեան Ս. Աստուածածին Եկեղեցին վերածուած է զանձատան, եւ որուն մէջ ամփոփուած են հինգ հարիւր տարուան մշակութային եւ հնագիտական արժէք ներկայացնող եկեղեցական սպասներ: Գանձատունը անուանակոչուած է Զարեհեան Գանձատուն, ի յիշատակ Զարեհ Ա. Կաթողիկոսի Մեծի Տանն Կիլիկիոյ, որ Զարեհ Եպիսկոպոս 1940-1956 եղած է Բերիոյ Թեմի Առաջնորդ:

- Քարէն Եփեմ ձեռնարանի շրջափակին մէջ եռալարի շէնք մը՝ հետզհետէ աճող ուսանողութեան համար:

- Ազգ. Կիւլպէնեան Վարժարանի նորակառոյց շէնքը՝ իր ներքնայարկ Եսայեան գեղակերտ թատերասահով:

- Ազգ. Հայկազեան տղոց բաժնի համար գնուած է նոր շէնք մը եւ բարեկարգուած:

- Ազգ. Սահակեան Վարժարանի մանկապարտէզի նոր շէնքը:

- Ազգ. Առաջնորդարանի շէնքին ընդարձակումը:

- Արամ Մանուկեան ժողովրդային Կեդրոնը:

- Հին Կիւլպէնեան հողին վրայ կառուցուած է գեղակերտ շէնք մը, որպէս հաւաքատեղի եւ ժողովատեղի Սիւլէյմանիէի շրջանի Համազգայինի, Օգնութեան Խաչի եւ ՀՄԸՄ-ի մասնաճիւղերուն: Շէնքը անուանակոչուած է Սիմոն Վրացեան Կեդրոն:

- ՍՕԽ-ի Նոր Գիւղի ընկերաբժշկական դարմանատունը իր ժողովասրահներով եւ դերձակատունով:

- Առանձնակի պէտք է արձանագրել Տեր Զօրի Նահատակաց Յուշահամալիրը եւ Մարկատէի անապատին մէջ նահատակներու աճիւններուն վրայ կառուցուած Ս. Յարութիւն Մատուոց:

- Հայ Ծերանոցի կողքին Արեւիկ թերթի մանուկներու դպրոցը: Սրբազանը լոյս ընծայած է հետեւեալ գիրքերը:

- Սաղմոսագիրքի աշխարհաբար թարգմանութիւն՝ հանդերձ գրաբար բնագրին, Հալէպ (1996):

- Առակաց գիրքի աշխարհաբար թարգմանութիւն՝ հանդերձ գրաբար բնագրին, Հալէպ (1997):

- Ս. Պատարագի երգեցողութեան փոքր գրքոյկ մը՝ Ս. Պատարագի մեկնաբանութեամբ, Հալէպ (1998):

- Ատենի Աւետարան՝ գրաբար եւ աշխարհաբար, Մոնթրէալ (2013):

- Տօնացոյց Հայց. Եկեղեցոյ, Մոնթրէալ (2013):

- Պատկերազարդ Ծիսական Բառարան, Մոնթրէալ (2014):

- Հաւատքի եւ Ծառայութեան Ուղիներով, Մոնթրէալ (2015):

- Իննսունամեայ հունձքը Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեւանքին, Մոնթրէալ (2020):

Իր վերջին աշխատութիւնն է «Բացատրութիւն եւ Մեկնաբանութիւն Ս. պատարագի Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցոյ» գրքոյկը:

Բերիոյ Թեմի 27 տարիներու ծառայութեան որպէս գնահատանք, Հայաստանի Հանրապետութեան նախագահ Սերժ Սարգսեան 3 Սեպտեմբեր 2011-ին Մոսկուայի Խորհրդարանի մետալով պարգևատրուած է Սրբազանը:

2004-էն ի վեր Սրբազանը Արամ Ա. Վեհափառ Հայրապետի բարձր տնօրինութեամբ, որպէս հոգեւոր տեսուչ, կը ծառայէր Մոնթրէալի (Գանատա) Ս. Յակոբ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցոյ:

Առաջնորդ Սրբազան հայրը Վանգուվրի համայնքին հետ



Կիրակի, 10 Դեկտեմբեր 2023-ին, Գանատայի Հայոց Թեմի բարեխնամ Առաջնորդ՝ Գերշ. Տ. Բարբէն Արք. Զարեան Սուրբ եւ Անմահ Պատարագ մատուցեց եւ յաւուր պատշաճի քարոզեց Վանգուվրի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցոյ մէջ:

Առաջնորդ Սրբազան Հայրը իր պատգամին մէջ ողջունեց Հոգեւոր Հովիւն ու հոգաբարձութիւնը, եկեղեցոյ բոլոր ծառայողները եւ Հայ Կեդրոնէն ներս գործող բոլոր միութիւնները:

Առաջնորդ Սրբազան Հայրը անդրադարձաւ այսօրուան աշխարհի տագնապներուն, դժուարութիւններուն եւ յատկապէս Հայ կեանքէն ներս անցնող եւ ներկայ իրադարձութիւններուն, մեր կեանքը յուզող ու երբեմն վտանգող երեւոյթներուն մասին: Սակայն, այսօր բոլորին դիմաց յիշեց պատգամը՝ Քրիստոսի իր աշակերտներուն եւ անոնց ընդմէջէն մեզի ուղղուած, չվհասելու, չտկարանալու, չյուսահատելու, այլ ընդհակառակը՝ մեր հաւատքը ամրացնելու եւ կամքերը պրկելու ալեկոծեալ եւ փոթորկոտ աշխարհին մէջ, դիմակայելու եւ յաղթահարելու բոլոր տեսակի դժուարութիւնները:

2023 տարուան աւարտին, Բարբէն Արքեպիսկոպոս հրաւիրեց հաշուետուութիւն մը կատարելու եւ անցեալի սխալները չհրկնելու եւ նոր ռազմավարութիւն ձգելու յանուն մեր համայնքներու վերակենսաւորման, յանուն մեր Հայրենիքի հօրացման, յանուն մեր եկեղեցոյ պայծառացման եւ մեր ժողովուրդի գոյատեւման:

Սուրբ պատարագի աւարտին տեղի ունեցաւ Հոգեհանգստեան արարողութիւն մեր բոլոր նահատակներուն եւ յատկապէս երկրաշարժի զոհերու յիշատակին:

Ս. Պատարագէն ետք, Առաջնորդ Սրբազան Հայրը նախագահեց եկեղեցոյ սրահէն ներս կազմակերպուած ձեռնարկին, ուր Հայ Օգնութեան Միութեան միօրեայ վարժարանի աշակերտները փունջ մը երգերով հանդէս եկան եւ դպրաց դասի անդամներ երաժշտական կտորներ ներկայացուցին: Ձեռնարկի ընթացքին, յիշատակեցաւ Վանգուվրի ՀՄԸՄի մասնաճիւղին մասնակցութիւնը Մոնթրէալի մէջ կազմակերպուած ՀՄԸՄի մրցաշարերուն:

Աւարտին, Առաջնորդ Սրբազան Հայրը իր հայրական պատգամը ուղղեց գնահատելով ՀՕՄ-ի միօրեայ վարժարանի ուսուցչական կազմի նուիրումը, շնչտելով վարժարանին կարեւորութիւնը համայնքի կեանքէն ներս յանուն սերունդներու դաստիարակութեան:

Իր այցելութեան ընթացքին, Բարբէն Արքեպիսկոպոս հանդիպումներ ունեցաւ Հայ Կեդրոնէն ներս գործող միութիւններու ներկայացուցիչներուն, հոգաբարձութեան, եւ համայնքի զաւակներուն հետ:

Voyages HAIG Travel
2եր բոլոր ճամբորդական Կարիքներուն համար հեռաձայնել՝ (514) 284-7676
3ԱՏՏՈՒԿ ԳԻՆԵՐ ԴԷՊՒ ՀԱՅԱՍՏԱՆ...
ՀԱՄԱԳՈՅՆ ՍՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ ԵՒ ՅԱՐՄԱՐԱԳՈՅՆ ԳԻՆԵՐ
*Նոր Յացո՛ւ՛՛ PERMIS DE QUÉBEC
Voyages Haig Travel 4150 Rue Sherbrooke Ouest suite 404A, Westmount, QC H3Z 1C2
Tel: + 1 514-284-7676 Email info@haigtravel.ca

CAMAM
3401, Olivar Asselin Montréal, Qc H4J 1L5
397, boul. des Prairies Laval, Qc H7N 2W6
45 Hallcrown Place Willowdale, On M2J 4Y4
To donate online www.camam.org

Ունկնդրեցէ՛ք Գանատայի տարածքին սփռուող հայկական ռատիոժամերը՝
ՎԱՆԳՈՒՎՐ- «Armenian Variety Show» Coop Radio 100.5 FM Երեքշաբթի երեկոները ժամը 6:00-7:00
ԼԱՄԸՄ- «Հայ Կեդրոնի Ձայն» 105.1 FM ACC Laval Radio Program Շաբաթ եւ Կիրակի առաւօտեան ժամը 7:30-9:00
ՄՈՆԹՐԵԱՆ- «Վանայ Ձայն» 1450 AM Երկուշաբթի երեկոները ժամը 8:00-10:00
ՀԱՄԻԼԹՆ- «Հայ Կեդրոնի» ռատիոժամ CFMU 93.3 FM Կիրակի առաւօտեան 10:00-11:00 cfmu.mcmaster.ca

«ԿԼՈՐ ՍԵՂԱՆ»ԻՆ ԱՆԱԹՈՒՄ ՄԷԿ ՏԵՂԷՆ (Սփիւռքէ Մը Անդրադարձներ)

Այս յօդուածը գրուեցաւ ՀՅԴ Բիւրոյի Պաշտօնաթերթ «Դրօշակ»ի խմբագրութեան հրատարակման, եւ լոյս տեսաւ Նոյեմբեր 2023-ի թիւին մէջ:

Յարգելի խմբագրութիւն «Դրօշակ» պարբերականի,

մեծ պատիւ մը ըրած էք ինծի՝ հրաւիրելով Հայ Սփիւռքին նուիրուած Ձեր յառաջիկայ մէկ թիւին գրակցելու՝ «Կլոր Սեղան»ի մը հեռանկարով: Հրաւեր նամակին կցած էք շարք մը հարցումներ:

Շատ, նոյնիսկ աշխարհ մը ընդարձակ ասպարէզի հրաւեր է ուղղուածը:

Թէպէտ՝ պատանութենէս ընթերցած եմ Հայ Սփիւռքի մասին գաղափարախօսական եւ վերլուծական հրատարակումներ, բազմազգար էջեր: Թէպէտ՝ հատոր մըն ալ հրատարակեցի՝ «Սփիւռք. Ինքնութիւն/Այլութիւն» տիտղոսով («Բան Եւ Գիր» Մատենաշար, Մոնթրէալ, 2020), եւ հիմա կ'աշխատիմ անոր երկրորդ հատորի ներածութեան վրայ, բայց միշտ կը յիշեմ իմ հիշիկ թէ՛օլէօլեանի մէկ պատասխանը իրեն հասցէագրուած իմ մէկ եմակին, ուր գինք «Սփիւռքագէտ» անուանած էի: Պատասխանը կը խնդրականացնէր իր «Սփիւռքագէտ» մը ըլլալը: Ինք՝ որ շուրջ 40 տարիներու մտաւորական կեանք մը նուիրած էր Սփիւռքագիտութեան կալուածին: Տարիներ՝ որոնց 30-ը «Diaspora» պարբերականի հրատարակութեան: Արդ, կ'ընդառաջեմ հրաւերին՝ որպէս յետիններէն յետինը սոյն կալուածով հետաքրքրուողներուն:

Ա.

Գրակցութեան նամակը սա հաստատումով կը սկսի. «Գաղտնիք չէ, որ վերջին տարիներին ու տասնամակներին Սփիւռքի հիմնահարցերը աւելի խորացել են, փոփոխութիւններ են կրել, ինչպէս և առաջ են եկել նորերը: Միաժամանակ գրեթէ բացակայում են այս հիմնահարցերի ամբողջական, անաչառ ու խորքային քննարկումները»:

Նախ կ'ուզեմ հարց տալ՝ թէ ի՞նչ է «հիմնահարցեր» բառով հասկցուածը:

Կ'ենթադրեմ՝ նամակին հետեւած «Առաջարկ Կլոր Սեղանի/Սփիւռքի Զարգացումը» վերնագրութեան ներքեւի հարցումները եւ կցեալ կէտերը (1, Ինչպէ՞ս Սփիւռքը զարգացնել՝ ի խնդիր «իր» ինքնութեան պահպանման, Հայ դատի հետապնդման, եւ հայրենիքի հզօրացման. 2, Սփիւռքի զարգացման համար՝ ինչպէ՞ս համախմբել անոր ներուժը. մասնագիտական, երիտասարդական-ուսանողական, Հայաստանէն արտագաղթած եւ «հայ կեանքէն հեռու» մնացող զանգուածներու. 3, Ինչպէ՞ս կանխարգիլել Հայրենիքի հետ խզումը, հետեւանք՝ պարտութիւններու ու անձնատուութիւններու, Հայաստանի իշխանութիւններու Սփիւռքի նկատմամբ վարած քաղաքականութեան, ձուլման. 4, Սփիւռքի վերակազմակերպումը ինչպէ՞ս կրնայ ընթանալ կառավարման-վարչական, կրթական-մշակութային-գիտական, տնտեսական ոլորտներուն մէջ. 5, Որո՞նք կրնան հանդիսանալ գլխաւոր դերակատարները. Ազգային կուսակցութիւնները, Եկեղեցի՞ն (ընդունելով հանդերձ Հայ եկեղեցւոյ յարաբերաբար մեծ դերը, նախընտրելի պիտի ըլլար՝ «յարանուանութիւններ» բառը օգտագործել), այլեւայլ կազմակերպութիւններ, ու անհատ ազգայիններ. 6, Սփիւռքի ամրապնդման մէջ ի՞նչ դեր կրնան խաղալ ազգային ռազմավարութիւն ունեցող հայրենի պետականութիւնը, հասարակական կազմակերպութիւններն ու ստեղծագործական, կրթական ու գիտական հաստատութիւնները:

Հարց կու տամ, եւ կ'ենթադրեմ. ի՞նչ հասկնալ «վերջին տարիներ»ով ու «տասնամակներ»ով: «Վերջին տարիներ»ը՝ շատ հաւանաբար «յեղափոխութիւն» պիտակուածին հետեւող տարիներն են: Իսկ «տասնամակներ»ը՝ Արցախեան շարժումը եւ Հայաստանի վերանկախացմամբ սկսած ժամանակը: Ուրեմն, այն տասնամակներուն եւ տարիներուն մէջ «հիմնահարցեր»ը խորացեր են, փոփոխութիւններ կրեր են, եւ նորերը «առաջ են եկել»: «Վերջին տարիներին» կապակցաբար, թերեւս կարելի է ըսել՝ թէ Սփիւռքի հիմնահարցերուն վրայ գրեթէ կը բացակային ամբողջական, անաչառ ու խորքային քննարկումներ: Բայց «վերջին...տասնամակներին» կապակցաբար՝ անկարելի է ըսել: «Վերջին տարիներին» կապակցաբար, թերեւս կարելի է ըսել», գրեցի, որովհետեւ լոկ իմ հիշիկ Տէր Դուրախեանի յօդուածներն իսկ՝ կ'անդրանցնին ժխտական հաստատումը:

Հարց մը եւս. ի՞նչ ըսել կ'ուզէ՞ «գրեթէ բացակայում են այս հիմնահարցերի ամբողջական, անաչառ ու խորքային քննարկումները» հաստատումը: Ձեմ հասկնար «ամբողջական»ին ի՞նչ ըլլալը, ի՞նչ ակնկալելը:

«Անաչառ»ը ընդհանրապէս արդար կը տեսնեմ, եւ մասամբ՝ անարդար (եւ որակաւորը «մասամբ»ին մէջն է): «Խորքային»ը՝ նոյնպէս:

Կը կարծեմ, որ բացի անտեսական քննարկումներէ՝ նկատի առնուած բոլոր «հիմնահարցեր»ուն մասին ամբողջական, անաչառ ու խորքային քննարկումներու ծաւալուն աւանդ մը ունինք: Դժբախտաբար՝ բոլորն ալ լուրջեան երկրին բնակիչներ են: Անկասկած, Սփիւռքի (անուանական ամբողջութիւն մը) «հիմնահարցեր»ը նախքան Արցախեան շարժումը կային որպէս խիստ ու տագնապալի խնդիրներ: Եւ կային անոնց լուծման առաջարկներ՝ գաղափարաբանական-հրատարակախօսական գրութիւններով կատարուած, բայց նաեւ կատարուած վերլուծումներով: Յետ Շարժման, խիստ ու տագնապալի խնդիրները աւելի խորացան, աւելի բարդացան: Այնուհանդերձ՝ գաղափարաբանական-հրատարակախօսական գրութիւնները շարունակեցին իրենց ճամբաները, նոյնպէս սակաւ (այս «սակաւ»ը հատորներու շարք մը կրնայ լեցնել) վերլուծումները: Թէ՛ գաղափարաբանական-հրատարակախօսական, եւ թէ՛ վերլուծական գրութիւնները «ձայն բարբառոյ յանապատի» մնացին, եւ դեռ՝ կը մնան...ընդհանրական խլութիւնը ինչպէ՞ս լսէ:

*

«Ինչպէ՞ս զարգացնել Սփիւռքը՝ ի խնդիր իր ինքնութեան պահպանման», հարց տրուած է:

Ուրեմն՝ Սփիւռքը ունի «իր» ինքնութիւնը, որ պէտք է պահպանուի զարգացման եղանակով մը:

Բայց ի՞նչ է Սփիւռքի ուրոյն ինքնութիւնը: Ի՞նչ է Սփիւռքը:

Փակագիրով արդէն նշեցի, թէ անիկա անուանական ամբողջութիւն մըն է: (Ուրուագրած եմ անունին մեր մօտ ծագման եւ զարգացման պատմութիւնը: Կարելի է զայն գտնել «Հորիզոն» Շաբաթաթերթի յաւելում «Սփիւռքի Տարի» թիւին մէջ, լոյս տեսած 2022-ին, Հովանաւորութեամբ Գանատայի Հայոց Թեմին, է 35): Անուանական ամբողջութիւն մըն էր Սփիւռքը, իսկ այժմ՝ առեւել եւս է, մանաւանդ աւանդական Սփիւռքի վախճանէն ասդին: Արդար է ըսել, որ Արցախեան շարժումը ամբողջութիւն մը ըլլալու զգացում մը եւ գիտակցութիւն մը բերաւ, հատուածներուն միջեւ համագործակցութիւն մը յառաջացուց, թէպէտ՝ մակերեսային: Սակայն, պատուհանեալ այս օրերուն, նօսրացած են այն զգացումն ու գիտակցութիւնը, եւ յուսախաբութիւնը եւ անզօրութիւնը կը տիրէ ամենուր:

Սփիւռքը ամբողջութիւն մը չէր, եւ չէ, բայց իրականութիւն մըն էր եւ է: Բարբէն Փափագեան «ո՞ր կ'երթայ Սփիւռքը» հարցումի մը՝ հարցումով պատասխանած էր, ըսելով. - ...ո՞ր Սփիւռքը...կ'ըմբռնեմ անշուշտ որ Հայաստանէն դուրս, Խորհրդային Միութեան տարածքէն (այս մտքի գրառման օրերուն՝ այդպէս էր ընկալուած — ԳԲ) դուրս գտնուող աշխարհացրիւ հայ բազմութեանց մասին է հարցը, սակայն ստիպուած եմ հարցնելու՝ «Ո՞ր սփիւռքը...գանատակա՞նը, ամերիկեա՞նը, Հարաւային Ամերիկայի՞ սփիւռքը, Յրանսայի՞ սփիւռքը, Յունաստանի՞նը, Պարսկաստանի՞նը, Աւստրալիո՞յ սփիւռքը, Եգիպտոսի՞, Յորդանանի՞, Սուրիո՞յ, եւ Լիբանանի՞ սփիւռքը...որովհետեւ չկայ մէկ Սփիւռք. կայ՝ անուանապէս, արուեստական անուանակոչումով մը (...) մինչ իրականութիւնը, ամէն օր քիչ մը աւելի շեշտուած ձեւով կը զգացնէ, թէ Սփիւռքի զանազան գաղութները յար եւ նման չեն իրարու. Ոչ քաղաքական, ոչ տնտեսական, ոչ մշակութային պայմաններով. ոչ իսկ՝ հոգեբանութեամբ եւ մտայնութեամբ:

Յիրաւի, Սփիւռքը ամբողջութիւն մը չէր, եւ չէ: Կը կրկնեմ՝ բայց իրականութիւն մըն էր եւ է: Կրնայ ձգտել, տքնելով գէթ կրնայ հասնել կառուցային ամբողջութեան մը, այսինքն՝ ի մտի ունիմ առկայ եւ ստեղծելի կառոյցներուն ընդհանուր համագործակցութիւնը, անոնց վարչական մարմիններուն, եւ կառոյցներուն շուրջ բոլորուած եւ բոլորուող բազմութիւններուն մերձեցումը: Այո՞ կառուցային ամբողջութեան մը, եւ ոչ՝ կատարեալ ամբողջութեան, որ ընդգրկէր բոլոր հայերը...մինչեւ ծագումով ա՛յն հայերը, որոնք կամայ թէ ակամայ, գիտութեամբ թէ անգիտութեամբ հրաժարած են հայ ըլլալու «մեղք»էն, եւ կամայ թէ ակամայ, գիտութեամբ թէ անգիտութեամբ յանձնուած՝ հայ չըլլալու «նուազ մեղք»ին: Հայութիւն համարուածին մեծագոյն մասը դուրսը պիտի ըլլայ կառուցային ամբողջութեան: Այսպէ՛ս կ'ըլլայ Սփիւռքը, աւելի ճիշդ՝ այսպէ՛ս կ'ըլլայ հայ սփիւռքները (եւ ո՛չ միայն «հայ սփիւռքներ»ը) ցարդ:

Անամբողջ մը՝ ինքնութիւն կ'ունենա՞յ: Բայց

ի՞նչ է «ինքնութիւն»ը:

Թէեւ «ինքնութիւն» բառը շատ կը գործածուի, եւ սովորաբար կը թուի պարզ ըլլալ, բայց բարդ կամ «առեղծուածային» բառ մըն է, ինչպէս կ'ըսէ պրոֆ. Թէօլէօլեան: Ըստ իրեն, բարդ կամ «առեղծուածային» է՝ որովհետեւ տարբեր գիտակարգեր զայն փորձած են եւ կը փորձեն սահմանել իրենց բառամթերքով, ենթադրեալներով եւ մեթոտներով: Անիկա համաստեղութիւն մըն է, որ այլազան գործօններ կը կազմաւորեն: Այն գործօններուն սուրբ երրորդութիւնը կը կազմեն՝ տարբերութիւնը, նոյնութիւնը եւ յիշողութիւնը: Նկատի ունենալով՝ որ «ինքնութիւն» բառը անձին նոյնութեան իմաստը ունի, փորձութիւն մը պիտի ըլլար կարգը դասաւորել այսպէ՛ս՝ նոյնութիւն, տարբերութիւն եւ յիշողութիւն: Բայց հարկ է հետեւել մտաւորականին տրամաբանութեան:

Տարբերութեան գործօնը: Տարբերութիւնը ինքնութեան «հիմնաքար»ն է: Ինչո՞ւ: Իր լուսաբանութիւնը. «Իւրաքանչիւր մանուկ եւ պատանի, կամայ թէ ակամայ, որոշ չափով կ'ընդունի, կը հնազանդի, եւ ուրեմն՝ անոր ինքնութիւնը կը կառուցուի հաւաքակալութեան ու պետութեան նախընտրած կաղապարներու հետեւողութեամբ»: Այսինքն՝ իւրաքանչիւր անհատի ինքնութիւնը կը կառուցուի իրմէ դուրս ձեւաւորուած տարբերութեան, կարելի է աւելցնել նաեւ՝ տարբերութիւններու կաղապարներով: Արտաքին տարբերութեան կամ տարբերութիւններուն ձեւաւորիչ կաղապարները կը մասնակցին «անհատական ինքնութիւն» կոչուած ներքին երեւոյթին կառուցման: Այլեւս արտաքին տարբերութիւնը կամ տարբերութիւնները անհատի «սահմանին...դուրսը» չեն գտնուիր միայն, այլեւ՝ ներսը: Այս մտքին համար ինքզինքը առաջարկած է որպէս օրինակ, եւ այսպէ՛ս՝ «Ես հայ եմ, ունի՞մ հայու ինքնութիւն: Կը կարծեմ՝ այո՛: Սակայն ամերիկացի՞ եմ: Նորէն՝ այո՛. այսինքն՝ առօրեայիս ընթացքին իբր համալսարանի անգլիախօս փրոֆէսէօր, միայն մակերեսայինօրէն ամերիկացի չեմ խաղար: Ամերիկեան ինքնութիւնը զգեստ մը կամ դիմակ մը չէ միայն, որ առտուն կը հագուիմ եւ երեկոյեան կը հանեմ: Ամերիկեան որոշ արժէքներ՝ իմ ալ արժէքներս են, վարուելակերպեր՝ նոյնպէս: Այլ խօսքով՝ օտարը, տարբերը միայն դուրսը չեն, այլեւ՝ ներսը, մասնիկ ու բաղադրիչ ինքնութեան մը, որ թէ՛ հայկական է, թէ՛ ամերիկեան»:

Սփիւռքի տարտղնուած վայրերուն մէջ, հայ հաւաքակալութիւնները ենթակայ են իրենց միջավայրերու եւ պետութիւններու հոգեբանական, կրթական, ընկերային, մշակութային, քաղաքական եւ տնտեսական զօրաւոր ազդեցութիւններուն: Այն ազդեցութիւնները երկուութիւն կը ստեղծեն. անձ մը՝ որ թէ՛ հայ է եւ թէ՛ օտար, միաժամանակ: Սփիւռքի տարբեր վայրերուն մէջ ապրող հայերը՝ իրարմէ տարբեր հայեր են: Ուրեմն, կարելի է հետեւեցնել՝ թէ տարբեր վայրերու հայ հասարակութիւններն ալ՝ իրարմէ տարբեր հայ հասարակութիւններ են:

Նոյնութեան գործօնը: Անիկա այլոց հետ, հասարակութեան մը հետ յատկանիշներու, արժէքներու եւ փորձառութիւններու բաժնեկցութեան կը վերաբերի: Անհատներ «կը հաւատան», որ իրենք ուրիշներու հետ «կը կիսեն հասարակաց որոշ յատկանիշներ», արժէքներ եւ փորձառութիւններ: Անոնց բաժնեկցածները «կրնան ըլլալ ֆիզիքական, կրթական, յաճախ պատմական՝ օրինակ ցեղասպանութիւն մը, բնաջնջման վտանգը, վերապրելու փորձառութիւնը, խոցը»:

Ըստ այս մտքին՝ կարելի է ըսել, թէ Սփիւռքի տարբեր վայրերու հայ հասարակութիւններուն նոյնութիւնը կը հիմնուի հաւատքին վրայ, թէ այլ վայրերու հասարակութիւններուն հետ հասարակաց յատկանիշներ, արժէքներ եւ փորձառութիւններ «կը կիսեն»: Կը խորհիմ, որ քանի յատկանիշներ, արժէքներ եւ փորձառութիւններ յաւիտենական եւ անփոփոխ իսկութիւններ չեն, ուրեմն՝ տարբերութիւններ են, ապա՝ նոյնութեան գործօնը եւս էսպէս տարբերութեան գործօն մըն է: Նոյնութեան գործօնը անմիջականօրէն կապուած է յիշողութեան գործօնին, կ'ըսէ:

Յիշողութեան գործօնը: «Հաւաքական փորձառութիւններ, ըլլան անոնք ահաւոր, ինչպէս ցեղասպանութիւնը, կամ փառաւոր նուաճումներ, միայն զանոնք ապրող սերունդի փորձառութիւններ չեն», գրած է: Պատմաններու եւ պատմագրութեան «զօղուած ճիգերու շնորհիւ»՝ փորձառութիւններու յիշողութիւնը կը հիմնաւորէ այլ սերունդներու յիշողութիւնը, գոր ամերիկեան մասնագիտական լեզուն՝ «postmemory» կ'ան-

Սեդան... Շար. էջ 8
ԳԱՌՆԻԿ Ա. Ք. Գ.

ՍՓԻՒՌԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Հայ յեղափոխական դաշնակցութեան պաշտօնա-
թերթ «Դրօշակ»-ի 2023-ի նոյեմբերի թիւը նուիր-
ուեցաւ Սփիւռքի զարգացման, ձեռնարկ մը արձագանգը
հանդիսանալով Մեծի տանն Կիլիկիոյ կաթողիկոս
Արամ Ա.-ի կատարած կոչին անցնող տարուան
սկիզբը՝ ի խնդիր Սփիւռքի վերակազմակերպման:
Առ այդ կազմակերպուեցաւ գրաւոր կլոր սեղան մը,
որուն մասին գաղափար մը տալու համար այստեղ կը
ներկայացնենք պաշտօնաթերթի նախաբանը, որոշ
կրճատումներով, եւ եզրափակիչ յօդուածը, որ ստո-
րագրուած է Վրէժ-Արմէնի կողմէ: Պաշտօնաթերթի
այդ թիւը կարելի է կարդալ <https://www.droshak.am>
կայքէջին վրայ:

«Հորիզոն»

Վերջին ողբերգական իրադարձութիւններէն
ամիսներ առաջ խմբագրութիւնս դիմեց խումբ կը
մտաւորականներու՝ միասնաբար բնակարան համար
Սփիւռքի զարգացման խնդիրները, որոնք միայն
Սփիւռքի խնդիրները չեն անկասկած, այլ համայն
հայութեան: Պատասխանները ստացուած էին այդ
իրադարձութիւններէն իսկ առաջ, բէւե չէր անտես-
ուած անոնց հաւանականութիւնը:

Այս փուլին մեր գրուցակիցները հանդիսացան
Վիգէն Արքեպիսկոպոս (Մոնթրէալ), Հերմիէ Աւագեան
(Ստեփանակերտ - այժմ Երեւան), Վազրիկ Բա-
սիլեան (Ասիւրն), Տէր Գառնիկ աւ. Բա. Գոյունեան
(Մոնթրէալ), Սուգան Խարտալեան (Սթոնհոլմ), Վար-
դան Յակոբեան (Երեւան), Իշխան Զիֆթեան (Համ-
պուրի), Զարմիկ Պօղիկեան (Հալէպ), Յարութ Սա-
տուեան (Լոս Անճելէս):

- Ուղարկուեցան հետեւեալ հարցումները.
1. Ինչպէ՞ս զարգացնել Սփիւռքը
 2. Ինչպէ՞ս համախմբել Սփիւռքի ներքին այդ զար-
գացման համար
 3. Ինչպէ՞ս կանխարգիլել Հայրենիքի հետ խզումը՝
 4. Ինչպէ՞ս կրնայ ընթացաւ Սփիւռքի վերակազմա-
կերպումը
 5. Որո՞նք կրնան հանդիսանալ գլխաւոր դերակա-
տարները
 6. Ի՞նչ դեր կրնան խաղալ Սփիւռքի ամրապնդման
մէջ ազգային ռազմավարութիւն ունեցող հայրենի
պետականութիւնը, հասարակական կազմակերպու-
թիւններն ու ստեղծագործական, կրթական ու գիտա-
կան հաստատութիւնները:

Յաջորդ փուլին կլոր սեղանի ներկայ հրապարա-
կումը պիտի դրկուի մամուլին ու այլ մտաւորական-
ներու, եւ անոնց, ինչպէս նաեւ մեր ընթերցողներու
հակադրութիւնները ի մի պիտի բերուին «Դրօ-
շակ»-ի հետագայ թիւի մը կամ թիւերու մէջ:

Այս բոլորը, սակայն, պէտք է յանձնուին պա-
տասխանատու անձանց, մարմիններու եւ հաստատու-
թիւններու ուշադրութեան՝ որպէսզի այստեղ արտա-
յայտուած նկատողութիւններն ու թելադրութիւնները
չմնան լոկ «ձայն բարբառոյ յանապատի» եւ մեր այս
նիգն ալ չդառնայ պարզապէս «պարապ վախտի խա-
ղալիք»...

«Դրօշակ»-ի խմբագրութիւն

ԱՄՓՈՓԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Ի՞նչ կրնանք եզրակացնել կլոր-սեղանի մեր այս
անդրանիկ փորձէն:

Առաջին հերթին՝ Սփիւռքի կազմակերպումը կամ
վերակազմակերպումը պէտք է միշտ մնայ մեր օրակար-
գին վրայ:

Երկրորդ հերթին՝ մենք պարտաւոր ենք տեւաբար
քննարկման նիւթ դարձնել Հայ կեանքի ու զայն լաւա-
գոյնս վարելու մեր փորձառութիւնը, աւանդութիւն-
ներն ու ներկայ մտեցումները՝ կարենալու համար քայլ
պահել ազգի ժամանակակից իրավիճակին հետ ու հաս-
նելու համար անոր կարիքներուն:

Մեր գրուցակիցները մեծ մասամբ դաշնակցական
ընկերներ են, իսկ անկուսակցականներն ալ հաւանա-
բար անձանց ըլլալու չեն մեր կուսակցութեան ըլլա՛յ
նպատակներուն, ըլլա՛յ գործելակերպին: Կրնանք ան-
վարան ըսել, որ բոլորն ալ՝ ոմանք առաւել, ոմանք
նուազ, դժգոհ են ներկայ իրավիճակէն. նոյնիսկ կայ
մտավախութիւն, որ իբր հաւաքականութիւն անկարող
կրնանք ըլլալ բան մը բարեփոխելու: Այդ սակայն ար-
դէն դուրս կու գայ անհատական տեսակէտներու ոլոր-
տէն ու կը դառնայ մեր՝ նոյն այդ հաւաքականութեան
պարտաւորութիւնը, որուն համար ալ, անկասկած՝ այս
կլոր-սեղանի նախաձեռնութիւնը:

Այստեղ յատակացնենք. մենք կրնանք խօսիլ մեր
կուսակցութեան մասին եւ արտայայտուած յաճախ ար-
դար, երբեմն ալ գուցէ անարդար դիտողութիւնները
կրնանք ուղղուած նկատել նախ եւ առաջ մեզի, թէ՛ եւ
ոչ ոք յակնդէ-անուանէ Դաշնակցութեան կ'ակնարկէ՝
սակայն համոզուած ենք, որ այդ դիտողութիւնները
կ'առնչուին նաեւ բոլորին, ու մեր ցանկութիւնն է, որ
բոլորն ալ՝ այլ կուսակցութիւններ, միութիւններ թէ՛
հաստատութիւններ արտայայտուին, հակադրեն այս
կլոր-սեղանին, շարունակուի բազմաձայն այս զրոյցը
եւ արդիւնքի հասնի, ունենայ բարեբար իր հետեւանք-
ները:

Ի՞նչ կ'ըսեն մեր գրուցակիցները:

Սփիւռքը բազմաշերտ է ու բազմաբնոյթ: Ան կը
բաղկանայ իրարմէ տարբեր ու հետզհետէ աւելի այլա-
դանուող մասերէ՝ հետեւանք մեր բնակած երկրներու
ընկերային ու այլ պայմաններուն. տարբեր՝ իրենց մե-
ծութեամբ, հնարաւորութիւններով: Նաեւ ներկայիս
կան երկու հակադիր զանգուածներ՝ Յեղասպանութենէն
վերապրածներու եւ անոնց շառաւիղներուն կերտած մե-
զի ծանօթ «Սփիւռք», եւ Հայաստանէն արտագաղ-
թածներու արտերկիրը: Մեծ մարտահրաւէր մը կը հան-
դիսանայ այս երկուքին մերձեցումն ու երկրորդին հա-
մարկումը ազգային կեանքին:

Այս իրականութեան մէջ Սփիւռքի ինքնութեան
մը պահպանումը, եթէ կարելի է նման ինքնութիւն մը
երեւակայել, նոյնպէս կարեւոր մարտահրաւէր մըն է
մեր կազմակերպութիւններուն համար:

Սփիւռքի զարգացումը կը կարօտի ամենէն առաջ
սոյն իրողութեանց գիտակցումին, ապա կառավարման
նոր ըմբռնումներու՝ ըլլա՛յ քաղաքական, ըլլա՛յ տնտե-
սական, ըլլա՛յ կրթական-մշակութային մարզերէն ներս,
կը կարօտի մանաւանդ մեր մարդկային թէ՛ նիւթական
ներուժը ըստ այնմ զարգացնելու եւ օգտագործելու նոր

ռազմավարութեանց:

Կ'առաջարկուի, ի միջի այլոց՝
- Ինքնութիւնը հիմնուած ըլլայ մեր հինէն եկած
գրական, պատմական ու մշակութային երկերու բովան-
դակութեան, մեկնութեան եւ փոխանցման վրայ.

- Հայկական ինքնութիւնը նաեւ ամրակայել մա-
նուկներուն մէջ՝ հինգ զգայարաններու իսկ ճամբով
մտերմացնելով զիրենք Հայ մշակոյթին հետ.

- Ուսումնական ծրագրերուն մէջ ներառել ազգա-
յին կրթութիւնը.

- Աշխատիլ իւրաքանչիւր Հայ անհատի ներուժը
միաւորել ընդհանուրին հետ.

- Ուժերու համախմբումը կ'ենթադրէ գաղափար,
օրակարգ, համոզում, փոխանցում, կարողութիւն, հետե-
ւողականութիւն.

- Օգտուիլ Սփիւռքի մասնագիտական ներուժէն,
թէ՛ զայն մասնակից դարձնելով մեր կազմակերպու-
թիւններու գործելակերպն ու գործունէութիւնը արդի-
ացնելու եւ թէ՛ զարկ տալով Հայրենիքի յառաջդիմու-
թեան.

- Լսել նոր սերունդը ի՛նչ լուծումներ կ'առաջադ-
րէ՝ իր տեսլականներուն համապատասխան.

- Նպաստել ծնունդներու աճին.

- Սերնդափոխութիւնը նկատի առնել կազմակեր-
պական կառոյցներու հիմքին իսկ մէջ.

- Կրկնակի քաղաքականացնել Հայկական կազմա-
կերպութիւնները.

- Վերամաստաւորել Սփիւռքի գոյութիւնը արդ-
իացանելով համահայկական ռազմավարական պատու-
մը կամ առասպելը՝ Հայաստանի անվտանգութիւնն ու
Սփիւռքի հզօրացումը նկատի առնելով.

- Սորվիլ կատարուած աշխատանքը գնահատել իր
արդիւնքէն դատելով.

- Թէ՛ եւ հայրենի հողը իր հոգեբանական անուրա-
նալի դերը կրնայ ունենալ, ինչպէս ունեցած է դարերէ ի
վեր, բայց հայրենի ազգապահպան պետութեան մը բա-
ցակայութեան, Սփիւռքը պարտաւոր է իր զարգացումը
անկախ պահել, հաւատարիմ՝ նոյնպէս դարաւոր իր
ինքնապահպանման աւանդներուն, ամրակայել պատ-
մական յիշողութիւնը՝ առանց անտեսելու Հայրենիքի
հետ գործակցելու հնարաւորութիւնները:

- Մշակել արեւմտահայ մշակոյթը խթանելու ծրա-
գիր, շեշտել արեւմտահայերէնի կարեւորութիւնը, զայն
երկրորդ պետական լեզու հռչակել տալ Հայաստանի
ազգային իշխանութիւններուն, օգնել, որ հայրենա-
դարձ արեւմտահայերը շարունակեն իբրեւ այդպիսին
սպրիլ հոն.

- Սփիւռքի զարգացումը թէ՛ ընդհանուր առմամբ
Հայաշխարհի՝ զարգացումը միայն ընդհանրական հա-
մագործակցութեամբ կրնայ ընթանալ, իսկ համաս-
փիւռքեան վերին մարմին մը, եթէ կարելի ըլլայ կեան-
քի կոչել, կազմուած ըլլալու է բոլորին ատակ ներկայա-
ցուցիչներէն:

Յաջորդ փայլերը

Սոյն կլոր-սեղանին մասնակիցները, իրենց դիտո-
ղութիւններուն կողքին, նշած են վերոյիշեալ առա-
ջարկները առանց միբճուելու անոնց մանրամասնու-
թիւններուն մէջ: Մենք պիտի խրախուսենք զանոնք, որ
անոնք եւ ասկէ ետք արտայայտուողները աւելի յստակ
բանաձեւումներով զարգացնեն իրենց մտքերը, որոնք
հետզհետէ կրնան դրուիլ պատկան մարմիններու եւ ժո-
ղովներու օրակարգերուն վրայ, կրնան եւ ծնունդ տալ
նոր նախաձեռնութիւններու:

Այլապէս ի գուր փորձ մը կը մնայ մեր այս ճի-
գը: Աշխատինք, որ իրապէս արդիւնաւէտ ըլլայ ան:

ՎՐԵՃ-ԱՐՄԷՆ

www.horizonweekly.ca
facebook.com/pages/horizonweekly
@horizonweekly
YouTube – Horizon Weekly TV

CAMAM
3401, Olivar Asselin, Montréal, Qc H4J 1L5
397, boul. des Prairies, Laval, Qc H7N 2W6
45 Hallcrown Place, Willowdale, On M2J 4Y4
To donate online www.camam.org

ADVERTISE YOUR BUSINESS HERE
ԹՈՐՈՆԹՈՅԻ ՄԵՋ «ՀՈՐԻԶՈՆ»Ի
ՁԵՐ ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ
ԴԻՄԵՅԵԸ՝ ԺԱԳ ՎԱՐՊԵՏԵԱՆԻՆ
**CALL JACK VARBEDIAN
(416) 722-9225**

«Հայ Ժողովրդից Աւելի Խաղաղասէր Ժողովուրդ Չկայ Եւ Մենք Դեմ Չենք Խաղաղութեանը, Բայց Ոչ Ի Հաշիւ Մեր Գոյութեան». Հարցազրոյց Հ.Յ.Դ. Բիւրոյի անդամ Խաժակ Մկրտիչեանի հետ

Ստորեւ, լոյս կ'ընծայենք հարցազրոյց մը կատարուած, Դեկտեմբերի 7-ին Հ.Յ.Դ.-ի Ա.Մ.Ն. արեւմտեան շրջանի պաշտօնաթերթ «Ասպարէզ»-ի (հարցազրոյցը վարեց՝ Նանէ Աւագեան) կողմէ, Հ.Յ.Դ. Բիւրոյի անդամ Խաժակ Մկրտիչեանի հետ:

Հ.- Ընկեր Մկրտիչեան, համայն հայութեան ուղղորդութիւնն այսօր ուղղուած է արցախահայութեան խնդիրներին: Արցախի ռազմաքաղաքական մի շարք գործիչներ Բարձուի բանտերում են՝ այդ թւում նաեւ Արցախի Հանրապետութեան Ազգային ժողովի նախագահ, Հ.Յ.Դ. Բիւրոյի անդամ Դաւիթ Իշխանեանը: Արցախի գերեզմարուած ղեկավարների իրաւական պաշտպանութեան առումով Հ.Յ.Դ-ն ի՞նչ աշխատանքներ է իրականացնում:

Պ.- Բնական է, որ Հ.Յ.Դ. Բիւրոյի անդամ Դաւիթ Իշխանեանի գերեզմարուած լինելն առանձնայատուկ նշանակութիւն ունի մեր համար, սակայն չենք ցանկանում նրան զատել միւս գերեզմարուածներից, եւ հարցը դիտում ենք ամբողջութեան մէջ: Ութ ռազմաքաղաքական ղեկավարների գերեզմարման փաստը մեր համար բնական մեծ հարուած է՝ ուղղուած Արցախի Հանրապետութեան խորհրդանիշին. այդ հեղինակաւոր դէմքերը կանգնած էին Արցախի Հանրապետութեան ծնունդի ակունքներում, եւ շատ մեծ դեր են ունեցել ստեղծելու այն նախանձելի ժողովրդավարական միջոցառումն ու կացութիւնը, որտեղ արցախահայութիւնը վայելում եւ արարում էր իր հայրենի հողում: Այսօր իրենց գերեզմարուածութիւնը մենք ընկալում ենք իբրեւ մեծ հարուած՝ ուղղուած արցախահայութեան ինքնորոշման եւ ժողովրդավարութեան արտայայտած կամքի ուղղութեամբ: Շատ զայրոյթ պատճառով է, որ ահաբեկչական վարչախումբը ունեցող երկիրն Ալիեւի գլխաւորութեամբ, ուղղակի համարձակուած է Արցախի ժողովրդավարութեան ծնունդ Արցախի ղեկավարներին ինչ-որ ահաբեկչական ամբաստանութիւններ ներկայացնել: Այստեղ նաեւ տարօրինակ, ընդվզեցուցիչ եւ անհասկանալի է ԵԱՀԿ Մինսկի խմբի երեք երկրների լուծութիւնը, որոնք մինչեւ երէկ դեռ ամբերիկեան բեւջներով Արցախի Հանրապետութեանը գումարներ էին յատկացնում, այցելութիւններ էին կատարում Արցախ, Մինսկի խմբի համանախագահները բանակցութիւններ, խորհրդատուութիւններ, հանդիպումներ էին ունենում արցախցի գործիչների հետ: Ադրբեջանի կողմից այդ գործիչներին ուղղուած ահաբեկիչի ամբաստանութիւնն արժէ նկատել նաեւ ուղղուած է նշուած երկրներին, որոնք, ի վերջոյ եթէ եզրակացնենք, նշանակում է, որ Ֆինանսաւորում կամ օջակցում էին ահաբեկչական կառոյցի, ինչն այդպէս չէ: Իրենց լուծութիւնը զայրոյթ է առաջացնում, քանի որ պէտք է նախ իրենք տէր կանգնեն իրենց սկզբունքներին, որ ժողովրդավարութեան շատագուրներ են, մարդու իրաւունքների պաշտպանութեան կարգախօսներով անստուգում, իսկ այստեղ՝ ժողովրդավարութեամբ արտայայտուած արցախահայութեան ժողովրդավար կամքի արտայայտութիւնն հանդիսացող ղեկավարների գերեզմարման հարցում լուռ են: Հ.Յ.Դ-ն փորձում է հանդիպումներում այս փաստն առաջ մղել, եւ ինչ որ ձեւով նրանց պատասխանատուութեան հրաւիրել, որ տէր կանգնեն այդ սկզբունքներին, եւ հնարաւորինս, ճշգրտաբան ինքնորոշումով փորձեն ազատ արձակել մեր գերեզմարուած անձանց:

Միւս դժուարութիւնն այն է, որ Ադրբեջանի օրէնքը թոյլ չի տալիս զբոսից փաստաբան հրաւիրել, եւ պահանջ են ներկայացնում, որ այդ փաստաբանն Ադրբեջանի քաղաքացի պէտք է լինի, որի արդարամտութեան հարցում շատ մեծ կասկած կարող է առաջանալ, թէ ինչպէս կարող է ադրբեջանցի փաստաբանը պաշտպանել արցախահայ ղեկավարի, դա արտուրդ (անհեթեթ) է: Հ.Յ.Դ-ն փորձում է մարդու իրաւունքների դրօշակակիր կազմակերպութիւններում ճնշումներ բանեցնել, որ կարողանանք Արցախի ղեկավարներին ազատել:

Հ.- Հ.Յ.Դ-ն Արցախի պետական համակարգի պահպանումը յայտարարել է առաջնայնութիւն, որը կարելու է լծակ է եւ արցախահայութեան իրաւունքների ամրապնդման, եւ յետագայում վերադարձի իրաւունքի համար: Ի՞նչ աշխատանքներ էք իրականացնում համակարգի պահպանման, Արցախի ապագայի ուղղութեամբ:

Պ.- Հ.Յ.Դ-ն Արցախի խորհրդարանում ներկայացուած ուժ է, եւ այսօր Հայաստանում են գտնուում Արցախի Հանրապետութեան նախագահը, գերագոյն դատարանը, եւ առնուազն համակարգը պահպանելու նպատակն ու ճիշդ մեր համար շատ կարեւոր են, այն իմաստով, որ արցախահայութիւնը յանկարծ չցրուի, եւ

ունենանք այդ ինստիտուտները (հիմնարկները), որոնք լիազօրուած են արցախահայութեան անուանով խօսելու: Մեր համոզմամբ, Արցախի խնդրի էջը փակուած չէ, եւ այդ էջը բաց պահելու առաջին նախադրեալը՝ այդ ինստիտուտները պահպանելն է, որպէսզի ժողովրդավարութեամբ ընտրուած այդ օղակները լիազօրուած լինեն Արցախի հարցի արձարձման եւ պահպանման:

Միաժամանակ, այսօր ցաւալիօրէն կարելի է նկատել, որ ՀՀ իշխանութիւնները այդ գծով վերապահ են, եւ տեղ-տեղ նաեւ արհեստական դժուարութիւններ են փորձում առաջացնել, որ մեր համար անընդունելի եւ ապագային քայլ է, որովհետեւ այդ միտումն առաջնորդում է միայն Արցախի էջի փակման. եթէ արցախահայութիւնը Հայաստանում ցրուի եւ աւելի վատ՝ Հայաստանից էլ դուրս գայ, նշանակում է մէկանգամ եւ ընդմիջւո՝ Արցախը կորցնելու խնդրի հետ հաշտուել ենք: Արցախի պետական ինստիտուտները պէտք է պահպանել, որովհետեւ նրանք դեռ անելիք ունեն արցախահայերի իրաւունքների պաշտպանութեան հարցում, եւ դա մեր հասկացողութեամբ՝ ինքնորոշման իրաւունքի հարցն է: Յեղասպանութեան հետեւանքով բռնի տեղահանուած եւ հայաթափուած Արցախի հարցն ամբողջ իրաւական ենթահող կարող է ծառայել վերագարծի իրաւունքի պահանջին, իբրեւ հատուցում, իբրեւ լուծում, եւ Արցախն ամէն իրաւունք ունի իր վերագարծի հարցն արձարձելու, բայց ոչ այն պայմաններում, որ ապրեց շրջափակման տասը ամիսների ընթացքում կամ սեպտեմբերեան յարձակումների ժամանակ:

Այդ բոլոր իրադարձութիւններն եկան համոզելու, որ եղած երաշխիքները չեն ապահովում արցախահայութեան իր հողում մնալու անվտանգութիւնը: Այս պահին, ԵԱՀԿ Մինսկի խմբի երկու համանախագահ երկրները՝ ԱՄՆ-ն եւ Ֆրանսիան շատ կրաւորական, եւ իրական գետնի վրայ լծակներ չունեցող կարգավիճակում են, իսկ իրական լծակներ ունեցող Ռուսաստանն իր դերը չկատարեց արցախահայութեան անվտանգութեան իմաստով: Ուրեմն, վերագարծի հարցը շատ սերտօրէն առնչուած է միջազգային անվտանգային երաշխիքների ստեղծման հետ: Առանց դրա, որեւէ մէկը չի կարող պատկերացնել, որ արցախահայութիւնը կարող է իր հայրենի բնօրրանի վրայ ապրել Ալիեւի բռնապետական եւ ահաբեկչական վարչախմբի ներքոյ: Որքան էլ վերջինս փորձի իր քարոզչական միջոցներով խօսել համարկման մասին՝ դա որեւէ պայմանով երաշխիք չի կարող լինել արցախահայութեան անվտանգութեան, այն դէպքում, երբ նոյն Ադրբեջանի քաղաքացիները հայածանքի եւ ամէն տեսակ կտտանքի են ենթարկուած:

Հ.- Եթէ ԵԱՀԿ Մինսկի խումբը չգործեց որպէս անվտանգային երաշխիք, ի՞նչ այլ տարբերակներ էք դիտարկում:

Պ.- Մինչեւ այսօր Մինսկի խումբը Արցախի հիմնահարցի լուծման միակ լիազօրուած միջազգային ինստիտուտն է, որը չաշխատեց: Աշխարհաքաղաքական այսօրուայ ընդհանուր դասաւորումներում, Հայաստանի պետութիւնն ու քաղաքական ուժերը ամէն ջանք պէտք է թափեն Մինսկի խմբի աշխուժացման եւ հասնեն նրանց պարտաւորութիւնների ստանձնմանը: Այդ ուղղութեամբ աշխատանք տանելու համար, համոզուած ենք, որ ՀՀ արտաքին քաղաքականութեան մէջ ճշգրտումներ պէտք է կատարուեն, որովհետեւ այն ինչ-որ ՀՀ իշխանութիւնները ներկայում վարում են իբրեւ արտաքին քաղաքականութիւն՝ բացարձակապէս չի բխում մեր ազգային շահերի հետապնդման ուղղութիւնից, հակառակը՝ քայլ առ քայլ փչացւում են մեր բոլոր յարաբերութիւնները տարածաշրջանում մեր քիչ թէ շատ դաշնակիցների հետ, եւ նրանց փոխարէն, գետնի վրայ այլ ազդեցիկ դաշնակիցներ չկան: Մեր միակ այլընտրանքն այս պարագայում Թուրքիան է, սակայն այս երկրի պատմական վերաբերմունքը Հայաստանի եւ հայութեան նկատմամբ գոնէ մենք սփիւռքահայերս շատ լաւ գիտենք: Դրա համար, Թուրքիան չի կարող որեւէ մէկ պարագայում Հայաստանի հետ բնականոն յարաբերութիւնների թեկնածու լինել: Այդ ուղղութիւնը մեր համար անհասկանալի է:

Հ.- Հ.Հ. արտաքին քաղաքականութեան ի՞նչ ճշգրտումների մասին է խօսքը:

Պ.- Հ.Յ.Դ.-ն ընդհանրապէս տարածաշրջանը բաժանում է երկու ռազմավարական գծի: Թուրքիա-Հայաստան-Ադրբեջան՝ հորիզոնական գիծն է, եւ ուղղահայեաց գիծը՝ Իրան-Հայաստան-Վրաստան-Ռուսաստան: Մեր համոզմամբ, որը զուտ հայկական կողմնորոշման մեկնակէտն է, ուղղահայեաց գիծը քիչ թէ

շատ համընկնում է հայկական շահերի հետ, սակայն դա բացարձակ իմաստով չենք ասում, որ հակադրուի արեւմուտքի հետ: Մեր պատկերացմամբ, կարելի է հաշտեցումներ գտնել, հաւասարակշռութիւն պահպանել արեւմտեան քաղաքականութեան եւ ուղղահայեաց գծի միջեւ: Մի բան, որ այսօրուայ իշխանութիւնները հակառակն են անում՝ այնպէս են անում, որ այսօր հակադրուող արեւմուտքի ու Ռուսաստանի կիզակէտը դառնայ Հայաստանը, ինչն աւերիչ հետեւանքների կարող է լինել: Այն ինչ եղաւ Արցախի պարագայում, կարող է նոյնը պատահել Հայաստանի դէպքում, եթէ այս քաղաքականութիւնը շարունակուի:

Հ.- Ձեր նշած ուղղահայեաց գծում առկայ Ռուսաստանից հայ հասարակութեան շրջանում մեծ հիասթափութիւն կայ՝ պայմանաւորուած Հայաստանի եւ Արցախի նկատմամբ այդ երկրի վերջին շրջանի կեցումով: Ի՞նչ երաշխիքներ կան, որ Մոսկուան այլ դիրքորոշում կ'որդեգրի:

Պ.- Մեր կարծիքով, Հայաստանի ու հայ ժողովրդի շահերի պաշտպանութեան միակ երաշխիքը կարող ենք լինել մենք, այսինքն՝ մեր սեփական ուժերին վստահելով, մեր շահերը հաշուի առնելով պէտք է առաջնորդուենք: Սակայն չես կարող իհարկէ կղզիացած ապրել, եւ պէտք է առնչուես եւ տարածաշրջանի հետ, եւ միջազգային քաղաքական կենտրոնների հետ: Քաղաքականութեան միտքն ու իմաստն է խորքի մէջ փնտռել այն եզրերը, որոնք քո սեփական շահը կը համընկնեցնի այլ շահերի հետ: Այսօր, կարելի է ասել, որ Ռուսաստանը, միւս երկրների նման, իր սեփական շահերն է հետապնդում, եւ ցաւալիօրէն դրանք այսօր համընկնում են Ադրբեջանի շահերի հետ: Սակայն այստեղ կայ նաեւ Ռուսաստանին վանելու ՀՀ իշխանութիւնների վարած քաղաքականութիւնը, եւ սա էլ աւելի է նպաստում Ռուսաստան-Ադրբեջան մերձեցման, եւ այդ առիթից Ադրբեջանը շատ վարպետօրէն օգտուած է՝ ու այս ամէնի արդիւնքն իբրեւ չարիք անդրադառնում է ՀՀ-ի վրայ:

Ձի կարելի հարկեր տոկոսով չէզոքացնել Ռուսաստանի հետ շահերի հետապնդման հարցը, ուղղակի խնդրել պիտի լինի հայկական շահերի համադրուած ռուսականի հետ, իսկ այդտեղ հնարաւորութիւններ կան, եթէ ՀՀ քաղաքականութիւնը հրաժարուի Արեւմուտք-Ռուսաստան հակադրութիւնը դէպի Հայաստան բերելուց, կամ Ռուսաստանի համար նոր ճակատ բացելուց: Մինչդեռ ՀՀ իշխանութիւններն իրենց կողմից այն զարգացնելու ճիշդ չեն անում, եւ հակառակը՝ ամէն ջանք թափում է, որ արդէն իսկ գոյութիւն ունեցող Արեւմուտք-Ռուսաստան հակադրութիւնում Հայաստանը բախման թատերաբեմ դառնայ: Գուցէ դէպի Ռուսաստան Հայաստանի նախկին կողմնորոշման վերականգնումը չլինի, որովհետեւ նոր աշխարհաքաղաքական իրականութիւն է, ռուսներն էլ շահեր ունեն կասպից ծովում, յարաբերութիւններ Թուրքիայի հետ՝ Սիրիայի եւ Լիբիայի տարածքներում: Այդ մեծ քաղաքականութեան մէջ մեր դերակատարութիւնը սահանափակ է, բայց մեր ազգային շահերից ելնելով, կարելի է Ռուսաստանի եւ Իրանի հետ յարաբերութիւնները վերականգնել, եւ դրական դարձնել՝ առանց հարուածելու այն յարաբերութիւններին, որ արդէն ունենք Արեւմուտքի հետ՝ ԱՄՆի, Ֆրանսիայի եւ այլ երկրների:

Հ.- Արարախարայելական, ուկրաինական հակամարտութիւնների պայմաններում Հայաստանը շարունակում է բախման հնարաւոր հարթակ հանդիսանալ:

Պ.- Գուցէ համաշխարհային լրատուական հոսքերում այս հակամարտութիւններն ինչ-որ չափով աւելի շատ են արժարժուած, սակայն դա չի նշանակում, որ Հայաստանում դա հնարաւոր չէ: Ցաւալին այն է, որ հակադրուող ուժերի բախումները տեղի են ունենում Հայաստանի տարածքում եւ Հայաստանի շուրջ՝ սակայն առանց Հայաստանի դերակատարութեան, այսինքն՝ մեր ճակատագիրը որոշուած է առանց Հայաստանի մասնակցութեան, եւ եթէ մեղաւորներ փնտռելու խնդիր կայ, ապա իրավիճակը պարզապէս արդիւնք է մեր վարած քաղաքականութեան: Գարեգին Նժդեհը լաւ խօսք ունէր՝ ասում էր. «Վայ այն ժողովրդին, որ իր գլխին եկած չարիքների պատճառն ուրիշների մէջ էր փնտռում»: Ի վերջոյ, մենք ենք մեր գլխին եկած չարիքների պատճառը:

Հ.- Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ կարծես բեկում կայ՝ ՀՀ իշխանութիւնները խօսում են խաղաղութեան պայմանագիր ստորագրելու մասին: Հ.Յ.Դ.-ն ի՞նչ դիրքորոշում ունի այս հարցի վերաբերեալ:

Lemkin Institute calls on U.S., Israel's allies to guarantee due process for Jerusalem Armenians

NEW YORK — The Lemkin Institute for Genocide Prevention said on December 12 that it is deeply concerned by threats to the integrity of the Armenian Quarter in East Jerusalem.

“We call on the United States and other close allies of Israel to take it upon themselves to guarantee the Armenian community due process in this land dispute. The global Armenian community has already lost one important historical land this fall — Artsakh (Nagorno-Karabagh), which was forcibly depopulated when Azerbaijan invaded, massacred Armenians, and terrorized almost the entire Armenian population into fleeing. The Armenian people cannot lose another,” said the Lemkin Institute in a statement.

The Armenian Quarter makes up about one-sixth of the city of Jerusalem. It is 1,600 years old, dating back to the reign of Roman Emperor Constantine. The first settlement of Armenians in Jerusalem predates even Constantine, with Armenians having settled in Jerusalem as early as the first century BCE when the Armenian Empire controlled nearby territories in Syria. Although the Armenian population in Jerusalem today is very small, the Armenian Quarter remains an important part of the Armenian Diaspora presence as the oldest remaining living diaspora of Armenians. The Quarter houses a diocese of the Armenian Apostolic Church.

In July 2021, the Armenian Patriarchate signed an agreement to lease a significant plot of land (called the “Cow’s Garden”) to Australian developer Danny Rubenstein for 98 years at a low annual rent of a few hundred thousand dollars per year. Rubenstein planned to build a luxury hotel on the site, necessitating the destruction of many of the existing buildings.

Baku sets up ‘single investigative team’ for former Artsakh leaders’ cases

BAKU — Azerbaijan announced that it has established a “single investigative team” in connection with the prosecution of former Artsakh leaders who were arrested following Azerbaijan’s attack on Artsakh that led to the mass exodus of more than 100,000 residents to Armenia.

“A single investigative team has been established in the General Prosecutor’s Office regarding separatists detained in the Karabagh [(Nagorno-Karabagh)] region of Azerbaijan,” said Azerbaijan’s Prosecutor General Kamran Aliyev, according to the APA news agency.

Artsakh’s former presidents Arakady Ghukasian, Bako Sahakian and Arayik Harutyunyan, as well as Artsakh Parliament Speaker Davit Ishkhanyan were

The deal came as a shock to the local community, the greater Armenian Diaspora, and Palestinian authorities, the latter of which felt as if the deal encroached on their own sovereignty. It also raised eyebrows due to its asymmetric rewards.

In response to this opposition, the Patriarchate announced on November 1, 2023, that it would be canceling the deal. However, Danny Rubenstein’s company, XANA, has refused the Patriarchate’s cancellation. It has brought bulldozers to the site and is beginning construction in the Cow’s Garden area.

Local Armenians have responded to the destruction of Cow’s Garden with peaceful protests in the form of public gatherings and a sit-in where construction had begun.

Israeli police and civilians have met these protests with violence, using dogs and firearms to intimidate the peaceful protestors. Danny Rubenstein and George Warwar, Chairman and Director of XANA International, appear to be using force and intimidation to deter the Armenian community from attempting to protect its land.

The cultural heritage of the Armenian Quarter of Jerusalem must be safeguarded from the developers and the armed settlers who are enabling them, ostensibly with the aim of creating a homogenized Jewish ethnostate in Palestinian territories.

“We stand with the Armenian community as they continue to resist the development of this land through peaceful demonstrations and by refusing to leave the premises. The Armenian community has already lost one significant historical community in Artsakh/Nagorno-Karabagh this year. It must not lose another,” said the Lemkin Institute.

among the officials who were arrested. They, as well as two high-ranking military leaders, Artsakh’s former State Minister Ruben Vardanyan and Artsakh’s former foreign minister David Babayan — who turned himself in — were sentenced to four-month pre-trial detention.

The leaders, who are being called “separatists” by Azerbaijan, have been charged with a slew of crimes, and are accused of inciting so-called genocide against Azerbaijan during the 1990’s and the 2020 War.

“The people of Azerbaijan will be fully informed about the course of this investigation and its results. We will provide it. After the investigation, the case will be sent to court,” said Azerbaijan’s Prosecutor General.

ANCC stands in solidarity with the people of Artsakh, recognizing their fundamental right to self-determination and freedom

STATEMENT ON INTERNATIONAL HUMAN RIGHTS DAY

OTTAWA—The Armenian National Committee of Canada (ANCC) issued the following statement on December 10, the International Human Rights Day:

